զար տարուց հետէ պահել և պահպանել է արձանագրարեր և ընծայում է յանկագրագրաց։

Այսպիսի բերդեր շատ կան Ազուանից աշխարհում, զոր օրինակ՝ Լահիճ նշանաւոր դիւղի մօտ (Ջամախուց գաւառն), կայ մի հին բերդ Նիալ անուամբ, Բասխալ նշանաւոր դիւղի մօտ կայ մի հին բերդ Բասխալ անուամբ, Թալըստանի վերևի բերդը Գետաւոր Ղալասի անուամբ, Դայմադաղի վերևի Ջուանշերի բերդը, եւայլն։

Եսայի կաթուղիկոս Ազուանից ԺԷ և ԺԸ դարու Ջամախու և Ձիրուանու դրուագման մասին գրէ յերես 30՝ այսպէս.

30. «Սկսեալ ի Ութն թուէն։ Եւ որքան հրաման եղեւ ի թագաւորէն գնալ զօրացն Պարսից ի վերայ նոցա այսինքն բնակելոցն ի քաղաքն Շամախու և Գանջայու և ի շրջակայս նոցա, և խանսն որ նստէին անդ, որքան չանացին, բնաւ ոչ ինչ կարացին գիմակայել, մանաւանդ թէ յաղթահարեալ կորացան տուաջի նոցա, որպէս և Հասան Ալի խանն Շամախու ի և ԵՒ զօրօք գնաց մինչեւ ի սահմանս նոցա, և նոքա ի յառաւօտս պահուն յանկարծօրէն հասին ի վերայ նոցա և յոլով մասն զօրացն կոտորեալ, զխանն եւս սպանին, և մնացեալքն փախստեայ գարձան։

32 Ֆանզի յերկիրն Շրուանայ ի նահանգին Ղապալու գոյ իշխանուԹիւն ինչ ազգի միոյ Մահմէտականի, զոր Մելիք անուանեն ի գիւղն ՂուրԹղաշին կոչեցեալ՝ Ղարասու անուանեալ տեղին։ Եւ երեւի թէ սոցին եղեւ ոմն Մելիք, զոր Մելիք Մհամմէտ ասէին, այր հանճարեղ և բախտիւն յաջողակ, և յոյժ ագահ քան զյուգայ, և անյագ քան զգրուկ. սա բոլոր երկիրն Ղապալայու ի բուռն էառ մաղԹայիւ, ի խանէն Շամախու։ Եւ երկիրն էր բաբելի և շէն և մարդաշատ, թէ հայ ազգօք, որ ի Ղարաբաղու երկրէն ժողովուրգք յոլովք անցեալ էին յերկիրն այն աւելի քան զտեղականսն և թէ այլ ազգօք, որ բնիկ ի յերկրէն են, յորոց պէս պէս հնարիւք Մելիքս այս ժողովեալ մԹերեաց գանձս յոլո-

---

Մահմէտն է «նորա մարգարէն» Թուականից երեւում է լինել 1212 տարուան դրամբ։